Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԱՆՈՐԻ ԽՕՍՔԸ

Սիրելի Ժողովուրդ հայոց.

Նոր Տարի է սեմին: Թերթում ենք պատմութեան եւս մէկ էջ՝ նոր հազարամեակի առաջին՝ 2001 թուականի էջը, որը ոսկեգիր է ու ոսկեկնիք Հայաստանում Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի եւ Հայաստանի ու Արցախի անկախութեան տասնամեակի մեծասքանչ խորհուրդներով:

Բարձրեալի օրհնեալ Կամքի հայցումով բարի տարի ապրեցինք: Առաւել աղօթք բարձրացաւ երկինք հայ հոգիներից: Աստծոյ խօսքը առաւել ու առաւել լսելի եղաւ մեր ժողովրդին, եւ օրհնուեց ազգս հայոց: Խաղաղութեան օրհնութիւն իջաւ Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրին: Արդարութեան շնորհ իջաւ հայոց կեանքին: Ֆրանսիան օրէնքի ուժով դատապարտեց Հայոց Ցեղասպանութիւնը:

Փառք Քեզ Աստուած, յաղագս ամենայնի Փառք Քեզ:

Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելու հայոց մեծ տարեդարձը նշանաւորուեց իբրեւ համաքրիստոնէական իրադարձութիւն: Հայաստան այցելեցին եւ մեր ժողովուրդին իրենց հայրական սրտի ամենաբարի մաղթանքներն ընծայեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքները, Հռոմի Սրբազան Քահանայապետը, Ֆոյր եկեղեցիների հոգեւոր պետեր ու բարձրաստիճան ներկայացուցիչներ, բարեկամ պետութիւնների պատուարժան պատուիրակներ:

Հաւատաւոր հայ հոգու նոր վկայութիւններ եղան նորոգուած ու նորակառոյց սրբատեղիները՝ տարբեր երկրներում, բայց մանաւանդ՝ հայրենի հողի վրայ: Հայոց Մեծ Դարձի յոյսով հազարաւոր հայ մանուկներ ու մեծեր ստացան մեր Սուրբ Եկեղեցու մկրտութեան դրոշմը եւ այսօր նոր տարին դիմաւորում են իբրեւ հայ քրիստոնեաներ: Տասնեակ ձեռնադրեալ հոգեւորականներ հովուութեան իրենց գաւազանն առան՝ 301 թուականի խորհրդով սկսելով իրենց սպասաւորութիւնը: Ապրեցինք Հայրենիք-Սփիւռք միասնականութեամբ, միմեանցով ուժեղ լինելու վստահութեամբ, որի քարեղէն մարմնացումը 1700-ամեակի Յաղթականաց՝ քաղաքամայր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցին է, որի լուսեղէն խորհուրդը 1700-ամեակի նորօրհնեալ Սրբալոյս Միւռոնը:

Փառք Քեզ Աստուած, յաղագս ամենայնի Փառք քեզ:

Գոհունակութեան այս զգացումով ենք հրաժեշտ տալիս 2001 թուականին: Հաւատում ենք, որ պարգեւած ուրախութեամբ ու լաւատեսութեամբ, հոգեւոր լիցքով անցնող տարին դառնալու է մեր կեանքի բարեշրջութիւնների ելակէտ, խրախոյս ու ներուժ:

Սիրելի ժողովուրդ հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս.

Ամանորի խորախորհուրդ այս գիշեր ամէն հայի հոգում վերստին աղօթք է՝ շաղախուած անցնող տարուայ յուշերի, բայց առաւել եւս՝ նոր Տարուայ յոյսի հետ:

Սիրելիներ, մենք խաչելութեամբ չէ, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ՝ սրտերում ծանրացած վրդովմունքը, օտարութեան մէջ իրենց բարօրութիւնը փնտռող հարազատների կարօտը մեր հոգիներում, այլեւ անվստահութիւնն ու

digitised by A.R.A.R.@

անհանդուրժողութիւնը եւ այլ ինչ գործ չար, չեն կարող խամրեցնել կեանքի մեր լաւատեսութիւնը, սասանիլ հայրենակերտումի մեր կեանքը, չեն կարող ազգային իղձերի իրագործման նուիրական ճանապարհին նահանջի շեփոր հնչեցնել: Քաջերի հետնորդները քաջերն են: Արիութեանը վատութիւն չխառնենք: Այս է պատգամը մեր հայրերի: Զերկնչենք եւ չտկարանանք: Հաւատարիմ լինենք ինքներս մեզ: Պահենք մեր ընթացքը հաւատարիմ Աստուածասէր մեր հայրերին, հաւատարիմ՝ Քրիստոնէական մեր արժէքներին ու հայրենեաց սրբութիւններին: Պահենք 88եան ազատատենչ, միաբան, արի ոգին, 2001 թուականի աղօթախօս հոգին, յոյսով, հաւատով, սիրով զօրացեալ՝ արարող ու աշխատասէր հոգին: Սա է հայոց նկարագիրը:

Այսօր յիշենք առաւել, որ ուխտաւորի ճանապարհ ենք անցնում: Ուխտաւորի ճանապարհը զօրացնում է անվհատ ու աննահանջ առաջ ընթանալու, անհնարինին հաւատալու, անհնարինը հրաշագործելու: Ուխտաւորի վստահութեամբ քայլենք նոր տարում: Ուխտաւորի ճանապարհը Տիրոջով է յաջողեալ: Հաւատանք, 2002 թուականը դառնալու է ձեռքբերումների ու յաղթանակների տարի:

Շնորհաւոր Ամանոր: Բարի երթ Տիրոջով: Խաղաղութեամբ եւ ժողովուրդների բարեկամութեամբ օրհնեալ 2002 նոր տարի:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

digitised by A.R.A.R.@